ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ
ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0023, ք. Երևան, Արշակունյաց 7,
☎ + (37460)474144, 474131, 474106

07.11.16թ. № ԱԿՄ1.2/6073-16

Ձեր_____ առ _____

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական
կազմակերպության նախագահ տիկին Լ.Դոյդոյանին

Ի պատասխան ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե հասցեագրած Ձեր 03.11.2016թ. №305-ի 8 գրության, հայտնվում է, որ ՀՀ Սահմանադրական դատարանի 2016 թվականի փետրվարի 23-ի ՍԴՈ-1256 որոշման պահանջներով պայմանավորված՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը սույն թվականի հոկտեմբերի 20-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ, որն արդեն իսկ ստորագրվել է ՀՀ Նախագահի կողմից և պատրաստ է հրապարակման:

Միաժամանակ հայտնվում է, որ ՀՀ Սահմանադրական դատարանի 2016 թվականի փետրվարի 23-ի ՍԴՈ-1256 որոշման՝ մարդու՝ ինքն իր մասին տեղեկություն ստանալու իրավունքի և հանրային նշանակության տեղեկություններ ստանալու իրավունքի ապահովման վերաբերյալ հարցերը կարգավորվում են լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքի 9-րդ, 15-րդ, 20-րդ և 24-րդ հոդվածներով, որոնք վերաբերում են համապատասխանաբար՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ, 32-րդ, 71-րդ և 75-րդ հոդվածներին:

Հայտնվում է նաև, որ ֆիզիկական անձի կողմից՝ իր կամ իր գույքի (այդ թվում՝ իրեն որևէ իրավունքով պատկանող գույքի առկայության) մասին հայցվող՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 73-րդ

հոդվածի 1-ին մասի 12-րդ և 15-րդ (մինչև 10 էջ պատճենահանված փաստաթղթերի մասով) կետերով սահմանված տեղեկությունը, ինչպես նաև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով և 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկատվությունը Կադաստրի համակարգի կողմից սույն թվականի նոյեմբերի 1-ից տրամադրվում է անվճար:

Կից ներկայացվում է լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքը և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ, 32-րդ, 71-րդ և 75-րդ հոդվածների ինկորպորացիան:

Ա.Մուսայան

Խ.Գասպարյան 060-47-41-37
Լ.Միրզոյան 060-47-41-38